



**ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

ԱՆՆԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

16 սեպտեմբերի 2014թ.

Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանի թիվ 2
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի
Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի
Ա. Խաչատրյանի

Քննության առնելով քաղաքացիներ Ժորա Խաչատրյանի և Ջուլիետա Գյունաշյանի
անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. Քաղաքացիներ Ժորա Խաչատրյանը և Ջուլիետա Գյունաշյանը 26.08.2014թ. դիմել են
ՆՏ սահմանադրական դատարան՝ վիճարկելով «Պետական տուրքի մասին» ՆՏ օրենքի 9-րդ
հոդվածի և 31-րդ հոդվածի «գ» կետի՝ ՆՏ Սահմանադրությանը համապատասխանության
հարցը:

2. Դիմողների փաստարկները հիմնականում հանգում են հետևյալին.

Դիմողները ՆՏ սահմանադրական դատարան ներկայացրած իրենց դիմումում խնդրել
են.

1/ «ՆՏ «Պետական տուրքի մասին» ՆՏ օրենքի 9-րդ հոդվածը համարել հակասող ՆՏ
Սահմանադրության 18, 19, 20, 42-րդ հոդվածներին եւ ճանաչել անվավեր,

2/ ՆՏ «Պետական տուրքի մասին» ՆՏ օրենքի 31-րդ հոդվածի «գ» կետը համարել
հակասող ՆՏ Սահմանադրության 18, 19, 20, 42-րդ հոդվածներին եւ ճանաչել անվավեր»:

Դիմողները միաժամանակ ներկայացրել են միջնորդություն իրենց պետական
տուրքի վճարումից ազատելու մասին:

Դիմողները գտնում են, որ վիճարկվող դրույթներն իրական արգելք են հանդիսանում
դատարանի մատչելիության համար: Ջուլիետա Գյունաշյանը մասնավորապես նշում է՝

ստորագրաս դատարանն անտեսել է այն փաստը, որ «Նայցվոր՝ Ժորա Վարագդատի Խաչատրյանը որդիս է, որը իմ միակ խնամակալն է, քանի որ ես Զինծառայության երկրորդ խմբի հաշմանդամ եմ, ստանում եմ չնչին զինթոշակ, որով հնարավոր չէ գոյատևել»:

3. Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ Ջուլիետա Գյունաշյանը դատարաններում հանդես չի եկել որպես կողմ, չունի իր նկատմամբ կայացված վերջնական դատական ակտ, հետևապես, օժտված չէ ՏՏ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետով ՏՏ սահմանադրական դատարան դիմելու իրավունքով:

Դիմող Ժորա Խաչատրյանը չի ներկայացրել պատշաճ իրավական հիմնավորումներ վիճարկվող դրույթների հակասահմանադրականության փաստի եւ դրանց՝ իր նկատմամբ թողած իրավական բացասական հետևանքների վերաբերյալ: Նարկ ենք համարում նշել, որ վիճարկվող դրույթներով սահմանվում են դատարան ներկայացվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ եւ վճռաբեկ բողոքների, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ տալու համար պետական տուրքի դրույքաչափերը /«Պետական տուրքի մասին» ՏՏ օրենքի 9-րդ հոդված/ եւ առանձին վճարողների կամ վճարողների խմբերի համար պետական տուրքի գծով արտոնություններին /«Պետական տուրքի մասին» ՏՏ օրենքի 9-րդ հոդված/: Կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ Ժորա Խաչատրյանի նկատմամբ կիրառված օրինադրությունները հստակ սահմանում են դատարան/ներ/ դիմելու կամ փաստաթղթերի պատճեններ /կրկնօրինակներ/ պահանջելու համար պետական տուրքի անհրաժեշտ վճարման դրույքաչափերը, ինչպես նաև պետական տուրքի վճարումից առանձին վճարողների կամ վճարողների խմբերի համար արտոնությունները, իսկ արտոնությունների կիրառման լիազորությունը դրված է դատարանի կամ դատավորների վրա, որոնք հիմնվում են կողմ/եր/ի ներկայացրած միջնորդությամբ իր/ենց/ գույքային վատ դրության վիճակը հիմնավորող ապացույցներով: Տվյալ պարագայում դիմողն իր բողոքին կից չի ներկայացրել պետական տուրքի վճարման փաստը հավաստող փաստաթուղթ, այլ իր ներկայացուցիչ Ջուլիետա Գյունաշյանն է ներկայացրել միջնորդություն՝ պետական տուրքի վճարումից ազատելու մասին, եւ որպես գույքային վատ դրությունը հիմնավորող ապացույց վկայակոչել է իր գույքային վատ դրությունը, ինչն էլ վերաքննիչ դատարանի կողմից չի բավարարվել այն պատճառաբանությամբ, որ Ջուլիետա Գյունաշյանը հանդիսանում է ոչ թե դատավարության կողմ, այլ բողոք բերող կողմի ներկայացուցիչ: Նետևաբար, վերաքննիչ դատարանի եզրահանգումները՝ տվյալ դրույթների պահանջի պահպանմամբ, իրավաչափ են, իսկ վիճարկվող դրույթները սահմանված են օրենսդրի կողմից: Նետևաբար, դիմողի փաստարկներն առ այն, որ դատարանն իր վրա է դրել օրենքով չնախատեսված պարտականություններ, ակնհայտ անհիմն են և սահմանադրաիրավական վեճ չեն առաջացնում:

Մինչդեռ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասը՝ որպես անհատական դիմումի ընդունելիության պարտադիր պայման, սահմանում է, որ դիմումը պետք է պարունակի ՀՀ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ: Այս համատեքստում ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-839 որոշման մեջ դիրքորոշում է արտահայտել առ այն, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջը, համաձայն որի՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որևէ հատկանիշով: Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ առկա չէ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասով պայմանավորված խնդրո առարկա դրույթների ենթադրյալ հակասահմանադրականության որևէ հիմնավորում:

Միաժամանակ, դիմողը չի հիմնավորել, թե վիճարկվող նորմերի «հակասահմանադրականության» արդյունքում իր որ սահմանադրական իրավունքն է խախտվել, ինչպես նաև չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող դրույթների հակասահմանադրականության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը, ինչը, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի եւ ՀՀ սահմանադրական դատարանի՝ ՍԴՈ-839 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշման, անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է:

Ելնելով վերոշարադրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ, 6-րդ կետերով, ինչպես նաև 69-րդ հոդվածի 4-րդ եւ 7-րդ մասերով, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

Քաղաքացիներ Ժորա Խաչատրյանի և Ջուլիետա Գյունաշյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝